

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

UNIL

գլխացի գորապետները թէ ափ-
գանական և թէ զուլուսների հետ
վերջին պատերազմների ժամանակ,
անդադար ստորադրական սխալ-
ներ են անում և չարդել են տալիս
իրանց զորքերը:

Անգլիական պարլամենտի մէջ
մեծ շքեղութեամբ և պատուով
յայտնվեց Նապոլեոն III-ի որդու
մահաւանդութիւնը: Յոնապարտեանները
անդադար ժողովներ են կազմում
իրանց գործունէութեան եղանակ-
ը որոշելու և մի նոր նախագիծ
կազմելու համար, իսկ Նապոլեոնի
ժառանգութիւնը ստանալու հա-
մար շատերն են գլուխ բարձրաց-
րել:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆԻՔԱՆԻՐԱՊՈՒՅ

16 յունիսի

Անցեալները Այլ քանադայայից «Մշակ» լուր-
բի մէջ հաղորդված էր, թէ հոգեւորական փոփո-
րից 12 հազար ռուբլի գումար է մեր պ. գանձա-
տան հոգաբարձուի մօտ առանց տոկոսի: Թէ
գանձապահի մօտ ուսումնարանապետական փող է
լինելու, այդ շատ պարզ է. էլ ձեռք պէտք է յանձ-
նել հոգաբարձութիւնը դպրոցի փողերը, եթէ ոչ
գանձապահին, իսկ թէ նրան առանց տոկոսի է
արված այդ փողերը, ինչպէս գրած է լուրի մէջ,
ինձ հաստատ յայտնի է: Գր գիտեմ նոյնպէս, թէ
գանձապահը ազգախորհրդարան չանցնում է նրանց
յօգուտ դպրոցի, թէ ոչ, այդանոյ միայն գիտեմ,
որ այդ փողերը վաղուց է, որ նրա մօտ են և ըստ
իմ կարծեաց աւելի պատկուհի, քան 12,000-ը:
Արդեօք ճշմարիտ է, որ նրա մօտ գտնված 12
հազար ռուբլուց աւելի գումար առանց տոկոսի
է, կամ ինքը չէ չանցնում նրան յօգուտ դպրոցի,
ինչպէս կարծում են շատերը: Եթէ ճշմարիտ են
դրանք, ուրեմն դպրոցը իր հարստութեամբ դար-
ձեալ աղքատ է մնացած այս յանգի տարիներում
հարկին մէկ հոգաբարձուի: Անշուշտ ուրախ կը
լինենք, եթէ գանձապահ-հոգաբարձուն շուտով փա-
րատել մեր հասարակութեան կասկածները:

Գալով պատգամաւորութեան և հոգաբարձու-
թեան, ընդհանրապէս մի երկու խօսք ունեմ ասելու,
որ ինձ համար պարտք եմ համարում: Միթէ դո-
քա դեռ էլ երկարատեւ անտարբերութեամբ զըզ-
րոցապատկան փողերը պէտք է թողնեն անպախի
մէկի վրա, որը տարվայ երեք ամիսը հաղիւ է
այստեղ գտնվում, երեք անգամ երեք ամիսները
դուրսը վաճառականութեամբ և կապալաւորութեամբ
պարապում և շատերն տեղիք տալիս տեսակ-տե-
սակ կասկածանքներ ունենալու: Միթէ դպրոցը
պակասութիւններ, հոգալիքներ, ցուրտ չոճի, որ
նորա փողերը իրան չանցնին չեն ծառայում: Միթէ
գրանց հետ և հասարակութիւնը չէ զգում, որ այն
չլինութիւնը, որին Վիճակ. Հոգ. դպրոց է անուա-
նում, յետ ընկած մի քարավանսարայ է դարձել,
քիչ է մնում, որ մի օր ինքն իրան փուլ գայ և
ամենքն հասկանան, որ էլ աւելի ցանկութիւն
չունի անմեղ մասնակիցներն իր մէջ ընդունելու, ո-
րովհետեւ թէ իր չլինութեամբն է անյարմար ժամա-
նակակից դպրոց անուանվելու և թէ իր ծերունի
հասակով անկարող այլ ևս ոտքի վրա կանգնելու:
Լաւ չի լինի, որ քանի չուտ է, քանի որ դեռ մի
փորձանք չէ պատահել, իրազորովէր այն մտա-
դրութիւնը, որ կար սորանից 4—5 տարի առաջ
—չինվէր ու փրկել եկեղեցու մօտ նշանակված
դպրոցը: Խնդրում ենք, որ այս բանի վրա լաւ
ուշիք դարձնէ հոգաբարձութիւնը, իսկ մենք, ինչ-
պէս սովոր ենք, կարող ենք սպասել յուսով:

Ծանօթ

ՆԱՄԱԿ ԱՆԻՔԱՆԻՐԱՊՈՒՅ

18 յունիսի

«Մշակ» 91 համարի ներքին լուրերում տը-
պված այն լուրը վաղաքայապատից թէ «այնտեղ
նշանակվ է պօստի մի պարուն, որ միշտ վանդակում էր
ապրում և որ պարունի նշանի մատանին լքվածնի
թանգարանի մէջ են տեսել, որ մատանին մի
հարուստ եպիսկոպոսից է մնացել» իսկ նոյնպէս
«Մշակ» 43 համարում այդ մատանու մասին գը-
րվածը թէ «սոցանից (մատանիներից) մէկն է
Թիֆլիսի նախկին առաջնորդ կարապետ արքեպիս-
կոպոսի դափա աստեղալ շատերն յայտնի մատա-
նին է», մի շատ տխուր տպաւորութիւն գործեց
մեր ժողովրդականաց վրա, առաւել ստորին դա-
սակարգի մարդկանց վրա:

Յայտնի է ամենքն թէ հանգուցեալ կարապետ
արքեպիսկոպոսը և նրա յիշատակները որքան մեծ
նշանակութիւն ունեն գաղթական ժողովրդի
համար ընդհանրապէս և անաղիքացիների համար
մասնաւորապէս, հետևաբար որքան վերաւորիչ և
գալթականացի էր քան է նոյն համար, որ իրանց
պաշտոն մեծաւորի թանկագին յիշատակը անցնի
մի օր և իցէ պօստեցու ձեռքը, իբրեւ նշանի մա-
տանի:

Մենք որ շատ լաւ գիտենք լքվածնին էլ, նրա
գլխաւորներն և անգլխաւորներն էլ իրենց լաւ և
վատ կողմերովը, գիտենք որ ու լքվածնից կա-
րապետ արքեպիսկոպոսի շարժական բոլոր կայ-
քերը, որոնց մէջն էր և վերջինից դառնայ մա-
տանին, բոլորովին անիրաւացի կլլեց տարուա,
գիտենք, որ այդ 3000 ռուբլանոց մատանու տեղ
գուցէ այժմ մի շինծու մատանի թանգարանումը
գրված կը լինի ժողովրդեան և միաբանութեան աշ-
քերը միմիկ քաշելու համար, գիտենք թէ ով է այդ
պօստեցին և իր սիրունի և այլն և այլն, չենք գա-
լթականից այդ լուրից, անհամբեր սպասելով որ այդ
լուրի տուրքութիւնը և անտուգութիւնը ապա-
ցուցիկ, որպէս զի յետոյ կարող լինենք մի շարք
յօդուածներով հրապարակ հանել գէթ ժողովրդեան
զգացմունքները, պահանջները, որոնք ի հարկէ կը
մնան ձայն բարբառող յանապատիւ: Բայց գուցէ
և այնպիսի հանգամանքներ յառաջ գան, որոնք
շատ անտոգիքի չը թուին ու լքվածնի միաբանու-
թեանը: Անաղիքայի եկեղեցու, թէ անշարժ և
թէ շարժական կայքերը իրենց եկամուտներովը
միջին 3—4 տարիներումը դարձել են խաղաղիկ
երեւմն այս կամ այն հոգեւորական անձին, երբեմն
այս կամ այն հոգեւոր ատենի ձեռքը, ժողովրդեան
այսքան ժամանակակից բողոքները «միտէր-պիթի»
եղած են և դեռ կը լինեն: Շատ հաւանական է որ
մի օր և իցէ դառնայ մատանի պատճառ դառնա
շատ հարկաւոր և հետաքրքիր հարցերը կրկին հրա-
պարակ հանելու և գուցէ աւելի լաւ և մշակված
կերպով. և եթէ դրանով էլ յանցաւորները նիւ-
թապէս չը տուին, գէթ բարոյապէս թող խաղա-
րու խաղաղաւոր լինեն բոլոր հայերի և օտար ազ-
գերի առաջ: Թող «Արարատը» բարեհաճի մեկնել
մեզ զգալից մատանու այդ գաղտնիքը:

ՆԱՄԱԿ ՇՈՒԾՈՒՅ

7 յունիսի

Ձեր պատուական լրագրում տպված Ամբոսիոս
Վ. Ռուբինսկայի վերաբերեալ յօդուածները և
տեղեկութիւնները մի մեծ տարածաշրջանում առ-
ւելի ունեցան շուշու հայ հասարակութեան մէջ,
որովհետեւ յիշեալ վարդապետը արդէն մի քանի
շաբաթ առաջ եկած լինելով Շուշու, սկսած էր
այդ միջոցներում յաճախակի քարոզներ խօսել և
կեղեցեաց մէջ և յիշեցնելով ժողովրդեան իրենց
խեղճ համագլխի մանկանց կրթութեան պիտոյքը,
հրաւիրել նրանց, ըստ կարելոյն նպաստելու իր մի
այդպիսի քարոզչութեան ձեռնարկը, այսինքն
դպրոցների վերանորոգութիւնը ի կատար ածելու:
Առթման դարձ մէջ—ստուգ էր—ուսումնոր-
թեան համար անհրաժեշտ պիտոյ է կրթութիւնը
և ահա այս պատճառաւ է, որ մի քանի տեղե-
րում հայերը ամեն ջանք ի գործ կը դնեն բազմա-
ցնելու ուսումնարանների թիւը պատուելի ազ-
գայնոց օժանդակութեամբ: Գուցէ ևս, ազնիւ պա-
տանք, կը յուսամ որ չէք զլսնայ իւրաքանչիւրդ
ցոյց տալ ձեր ազգասիրական եռանդը, մասնակ-
ցելով այդ ընդհանուր աշխատութեան... Շուշու
հայերը, որոնք մինչև այն օր սառն կերպով նա-
յում էին եղող բարեկարգութեանց վրա, իրախու-
սվելով հայր-ուրբի խօսքերից, պատրաստ էին
նորա ցանկութիւնը կատարել նորա խոստացած
բարեկարգութեանը հաստատման համար: Վերջա-

պէս անցեալ ամիս 27-ին, առաւօտեան ժամը 9-ին,
հոգեւոր օրիորդական դպրոցի դահլիճում յիշեալ
Ռուբինսկայ վարդապետը հրաւիրելով քաղաքի մի
քանի հայ նշանաւոր անդամներին առաջարկեց
(մի երկար քարոզութիւնից յետոյ) որ խորքան-
չիւր ոք, ըստ իր ցանկութեան մի գումար նուրի
դպրոցները վերականգնելու համար: Դրովին ան-
դամները (որ բաղկացած էր մի քանի անձնակա-
րից) չը բացասեցին նորա խնդրիցը, և առատա-
ձեռն կերպով եղան մինչև 70 ռուբլ վճարողներ: Միւս
օրերը ևս շարունակում էին միւս քաղաքացի հայերը
տալ նուէրներ, իրենց անուանները արձանագրելով
նուիրատուութեան ցուցակում, երբ «Մշակ» 77 հա-
մարը ստացվեց, որ և պատճառեց մեծ յուսահատու-
թիւն նուիրատուներին, սակայն կրկին Ամբոսիոս
վարդապետը ամիս 2-ին, երեկոյան պահանջ քարո-
զելով Ազգեկցոյց մայր եկեղեցում, նա հաւա-
տացրեց բոլորին, որ այդ գումարները չեն այլ
ինչ, եթէ ոչ անտեղի զրպարտանքներ և թշնամա-
կան պատճառներ, որոնց փոխարէն ժողովուրդը
պիտի կրկնապատկէ իր նուէրները, բայց ժողովու-
րդեան մէջ կատարածանքներ պակաս չեն, սակայն
պատճառներ կան շատեր, որոնք այժմ էլ շա-
րունակում են իրենց նուիրատուութիւնները: (Ին-
չոր հաւաքած գումարը մինչև այսօր հազար ռուբ-
լուց աւելի կարող է լինել):

Մենք զարմանում ենք տեսնելով, որ այդպիսի
մի նուիրատուին, երբ առաջարկում է մի փոքր
գումար «Արարատեան ընկերութեան» համար
ստորագրել, նա մերժում է նորա խնդրիցը, իսկ
առատաձեռնութեամբ չէ խնայում իր դրամները
նուիրելու մի երկրագործական դպրոցի վերանո-
րոգման և նրա ունեցած պարտեացը օգնելու մտով:
միթէ աւելի լաւ չէր, որ այդ գումարները ուղարկ-
վէին «Արարատեան» ընկերութեանը, որոնք բա-
ճարձակ բուռն ճիգեր կը թափեն Հայազգի ման-
կանց լոյս և կրթութիւն տալու:

Նր յուսամ որ այս անգամ ազնիւ քաղաքացիք
կը բան իմ խօսքերը, տեսնենք, զգործին վերջը
կը պակսի:

Շուշուցի

ՆԱՄԱԿ ՎԼԱԴԻԿԱՎԻԿԱՍԻՅ

15 յունիսի

Մայիս ամիս սկզբում պատահեցաւ հետեւեա
անցքը:

Մի խմբիկ Սանդրո անունով մանկութիւնից
պարապելով այս տեղ հացթուխութեամբ մի
նշանաւոր գումար էր կազմել իրան համար, և ո-
րովհետեւ արդէն 30 տարուց անց էր կացած նրա
տարիքը, մտածում էր վերջացնել իր գործը Վլադի-
կավիչաբում և վերադառնալով իր հայրենիքը ա-
մուսնանալ: Այս միտքը յայտնում է իր ծանօթ
խմբիկներին, այս վերջիններս 4 հոգի հացթուխ-
ներ խորհուրդ են կապում յափշտակել դրա գու-
մարը, և մի գիշեր խորտակելով դուռը մտնում են
փուռը, իսկոյն Սանդրոյի երկու ծառաներին
փաթկալով վերմակի մէջ ստիպում են լուս, և
երկու հոգի խանչալներով վերադառնալով Սանդրոյին
ստիպում են տալ ունեցած գումարը: Նա ցոյց է
տալի արդիւք, ինչ տեղից յափշտակում են 60
ռուբլ: Գրում և վաճառում փաթկալած թղթեր: Երբ
վերադառնում Սանդրոն աղաւաւ է, ձեռք ցան
առնում, կէսն էլա թողէ քին համար, շարագործնե-
րից մինը խփում է խանչալը Սանդրոյի կողքին և
փախչում: Այդ փաթկալած թղթերը եղել են ան-
ցեալ տարիները պատենները, իսկ 12000 ռուբլի
ունեցել է կապած իր ծնկներից ցած: Երբ առա-
գանկները փախչում են սրանց ձայնի հանում է
պօլիցիան և Սանդրոյի ցոյց տուած փուռում կա-
րանաւորում են երեք աւազակներին և մինը պա-
տուհանից փախչում է, իսկ վերադառնալով 10 օ-
րից յետոյ առաջացաւ:

Մայիսի 29-ին Վլադիկավիչայից 7 վերստ հեռի
չաչաները կէս գիշերին սպանում են մի տրապի-
զօնի հայ երիտասարդին, որի անունն է Աւետիս
Յակոբեանց, վերադառնում են նրա ընկերին ու այ-
րում են խրճիթ յափշտակելով թէ փող ու թէ
այլ կայք 1000 ռուբլու: Սա պարագուտ էր պար-
տիզպանութեամբ ցանում էր թմարաբու,

Նրբ կառավարութեան պալատը հարկաւոր գեղջուկներ անօրէի և արևի ջերմութեան տակ կը դեղերին շաքարով մասնաւոր գործերու համար, մինչդեռ իրենց երկրագործութեան ձմեռային օրերին ձգելով կը թափառին, երբ շրջակայ գաւառներէն շաքարովներով ամիսներով ըստ դեղերողներ կան, կրնայ կրհամկուիլ ամեն բան:

Այժմ այսքան գրելով կը թողուի տեսնել ապագային, յուսալով որ այս տարւոյ միջին կին վերջ մը պիտի տրվի, և խոտանալով շարունակել այսուհետեւ ճիշդ և անկողմնակալ յօդուածներ ձեռք բազմարդիւն Մասիսի միջոցաւ: Ինչ օգուտ որ մեր գրացի Նալմէնը չեն կրնար Մասիս կարգաւ, և ծածկերէն, գրով ալ ժողովրդական թերթեր չեն գտնուիր, մինչդեռ Ներսիսյան, Ամերիկայի և Հնդկաստանի լուրերն անթերի հրատարակող ծածկերէն թերթերն իրենց հայրենեաց՝ այն է Անատոլի վրա երբեք խօսել չեն ուզեր, չեն գիտեր ինչու համար: Թէ թէ մանր էջքեր և Մանգուլի լրագիրներն անոնցմէ խիստ շատ օգտակար կըլլան Նոյանքերու համար, որ ու մանր ա, բ, գ, տրվելով իրենց կը կարգան և ունենց իրենց հայ բարեկամաց միայն կարգացնելով ունենցիր կըլլան: Ընդդէմ խօսելու համար տեղիս ընթերցարանը մեծ օգուտ է ամեն կարգի ժողովրդեան և պատեւ հայութեան, որ այսօր քանի մը տեսակ լրագիրներով ընթերցանութեան գործին կը ծառայէ: մինչդեռ քաղաքներու շատերն այս օգուտէն զուրկ են, ինչպէս նաև Գարեբեկի քաղաքը ուր սնտոյի և ներքին վճէրով ժամանակ կանցուցնեն:

Վերստիւն

Վերստիւն ամեն բան կատարելով է իր սովորական ընթացքով, այսինքն այնպէս ինչպէս կարելի էր կառավարութեան և մեծամասնութեան համաձայնութեամբ կարգադրել ու նախասահմանել էր: Վերջին անգամ սենատը և պատգամաւորներ ժողովը միասին գումարելով ազգային մի մեծ ժողով կազմեցին: Նրանք մի մասնագործ նշանակեցին, որպէս զի նա քննէ սահմանադրութեան Գործը յօդուածը: Մասնագործը մի և նոյն օրը քննեց իր յանձն առած գործը, և յանձնեց ազգային ժողովին: Ազգային ժողովի այդ օրվայ նիստի հետեանքն այն եղաւ, որ նա ձայներէ ահագին մեծամասնութեամբ (549 ձայն 262-ի դէմ) վճռեց ռեչաւսնել սահմանադրութեան Գործը յօդուածը, և ընդունել Պէյրալի առաջարկած օրէնքի ծրագիրը: Անձադրմանները քանի-քանի անգամ աշխատեցին յետաձգել այս քուէարկութիւնը, բայց այդ նրանց բնաւ չը յաջողվեց: Նրանք առաջ սկսեցին յարձակել մասնագործի ապօրինի լինելու մասին, որովհետեւ, ասում էին նրանք, այդ մասնագործը օր առաջ պատրաստված է ձախաղովմանների ազդեցութեան ներքոյ: Ձախաղովմը բնաւ ուշադրութիւն էլ չը դարձրեց այս ամբաստանութիւններին, և պ. Բիւֆֆէ գործը կրկնով պահանջեց, որ Փարիզ վերադառնալու հարցը հենց այդ օրը վճռվի ազգային ժողովում: Ինչպէս արդէն վերջ յիշած քուէարկութենից տեսանք, մեծամասնութիւնը չը տարակուսեց ստալու իր համաձայնութեան քուէն, և այսպէս ձախաղովմանների նախատեսած բարեկարգութիւններ շնորհով, այդ մեծ ժողովը վերջացաւ ամենակատարեալ և ամենապատշաճ խաղաղութեամբ: Անձադրմանները ժամանակ չունեցան ամենապիտիւ խոփուլիւն անգամ յարուցանելու: Ահա թէ ինչպէս առանց որ և է դժուարութեան միջով ցաւ Փարիզ վերադառնալու այն կնճառ հարցը, որի մասին լրագիրները սրանից դեռ երեք ամիս առաջ, սարսափելի նախադուշակութիւններ էին անում:

Բօնապարտեանները իրանց քուէն տուին յօդուած մեծամասնութեան: Պ. Պոլ-Վաստանեակը, որին թոյլ էր տրված ներկայ գտնուիլու ազգային ժողովի քուէարկութեանը, օգուտ քաղելով այս բաղաւոր դէպքից, մտաճեց, որ արդարագատութեան մասնակցուց առաջ մի անգամ էլ անպատուէ հանրագիտութեանը: Ստեղծ իր անձնական կարծիքի մասին, նա յայտնեց, որ մեծ ուրախութեամբ է տալի իր քուէն Փարիզ վերադառնալու հարցին օգտին, որովհետեւ նրա կարծիքով հենց որ պարլամենտը Փարիզ կը վերադառնայ, այն ժամանակ կը կատարվի նրա ամենապահանջ փափագը, և հանրապետութիւնը նրա ատեն լուրեան առարկան քաղաքային վերջ կըստանայ այնտեղ: Այդ րօպէին, երբ նա այդպիսի ջերմութեամբ կայծակներ էր արձակում հանրապետութեան դէմ, նրան այդպիսի մի սեւ ապագայ գուշակելով, երեւի այդ միջոցին նրա մտքում չէր անցնում որ բոլոր այդ սեւ-սեւ մարգարէութիւնները իր սիրելի բօնապարտութեան վրա էին կատարվել: Որովհետեւ հենց այդ մի և նոյն օրն էր, որ Անգլիայի պաշտօնական թերթերը հարցը դուրս էին Լուի-Նապոլէօնի անախկնայ մահը: Մեր ընթերցողներին արդէն յայտնի է, այն հեռագիրը, որը հարցը դուրս էր թէ ինչպէս այդ իշխանը գուշակների դէմ մի հետախուզութեան ժամանակ, յանկարծ մահ ստացաւ: Ասում են, որ երիտասարդ իշխանը սպանվել է նիգալով: Բօնապարտեան դահլի վերջին և ուղղակի ժառանգը իշխան Լուի-Նապոլէօնն էր, որ նոյնպէս և Թէրօմ էր կոչվում: Գործերի ներկայ դրութեան մէջ եթէ խելացիութիւնը չը համարվէր ցանկանալ կրկին Ֆրանսիական միապետական գահը բարձրանալ, այն ժամանակ այդ իրաւունքի օրինաւոր տէր միայն Լուի-Նապոլէօն (Թէրօմ) կարող էր համարվել:

Նրիտասարդ իշխանի մահը մեծ յուզմունք պատճառեց նրա ջերմ կուսակիցներին: Բօնապարտեաններից շատերը, Նապոլէօնի մահուան լուրը լսելուց յետոյ, ուրախան մշտնջենակալէս նրան, որին դեռ երէկ կուռքի նշան պաշտում էին: Մտտով միայն կարելի է ցոյց տալ այն երեք չորս բարեկամների վրա, (նրանց թուում և կայսրութեան նախկին մի-նիստը պ. Եմիլ-Սլիվիէ) որոնք հաւատարիմ մնացին իրանց կուռքի դիակին: Ահագին բաղմունքիւն միապետականների յետ կանգնեցին իրանց մտադրութենից, որովհետեւ նրանց ասելով անյաղճելի դժուարութիւններ կան առանց կայսրի կայսրութիւն ստեղծել: Սրանից կարելի է եղանակցել, որ բօնապարտեան կուսակցութեան բաղիւցումը կը քայքայվի և նրա անդամները կը միանան միւս գոյութիւն ունեցող կուսակցութիւնների հետ: Ի հարկէ հաւանական է, որ նրանց մեծ մասը միապետական կուսակցութեան մասը կը կազմեն, մի քանի անշունթ թւեր էլ կը միանան ուրիշ այլ և այլ կուսակցութիւնների հետ, և ո՞վ գիտէ, թերեւ և նոյն իսկ հանրապետութեան ներկայացուցիչների հետ:

Ինչ էլ որ լինի, բնութեան մի գարնանայել երևոյթ չէ՝ արդեօք, որ հենց նոյն իսկ այն րօպէին, երբ միապետականների ամենազօրեղ և ամենաջերմ պարագլուխներից մէկը ազգային ժողովում մահ է սպառնում հանրապետութեանը, այդ մի և նոյն րօպէին յանկարծ մի դաւաճանական արձագանք դառնալով Ամերիկայի ամենահեռաւոր ծայրից բօթ է տալի այն իշխանի մահը, որը յենած իր բազմաթիւ բարեկամների պաշտպանութեան վրա, երբեք մտքից չէր գցում, որ մի օր, նոյն իսկ այդ բարեկամների անձնաւորութեան շնորհիւ, նա կը բարձրացնէ իր կործանված գահը հանրապետութեան աւերակների վրա:

Փարիզի մի ծաղրական թերթ հանաք առնելով ասում է, որ բօնապարտեանները և միապետականները շատ լաւ կանեն, որ Բաբելոնայ հրուանդանին Սեպտուայ հրուանդան

անուանեն, որովհետեւ նրանց իշխանի մահուան սեւ լուրը այնտեղից ստացվեցաւ: Ասում են, որ Ֆրանսիայի նախկին կայսրուհի Էմիլիա (Նիքէիա) հոգեպէս սաստիկ ընկած է: Բժիշկները երկիւղ են կրում նրա մահուան կարողութեան խանգարվելուց:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիայի դաշնակցական խորհրդարանը ձայների ահագին առաւելութեամբ ընդունեց իշխան Բիսմարկի օրէնքի այն ծրագիրը, որը վերաբերում է երկաթուղու գների համահասարակութեանը: Չը նայելով օրէնքի ընդունելութեանը, մի քանի դաշնակց պետութիւնների ներկայացուցիչներ ահագին դժուարութիւն էին հանում այդ օրէնքի ընդունելութեանը, և դեռ այս օր էլ այդ հարցը դեռ չէ դադարում լրագրութեան նիւթ դառնալուց: Նա այդ արգելքները հիմնված են մի նշանաւոր պատճառի վրա, այն է, որ այդ ներկայացուցիչներից շատերը իրաւամբ վախենում են, որ իշխանը փոփոխութեան ենթարկելով սահմանադրութեան այդ չնչին և ինքն ըստ ինքեան մինչև անգամ օգտակար օրէնքը, այդպէս չը վարվի և կայսերական սահմանադրութեան միւս օրէնքների հետ:

Այդ հարցը սաստիկ հակառակութիւն է գտնում նոյնպէս և ազատամտականների կողմից, այնպէս, որ եթէ այդ հարցը հասնի և պարլամենտի վիճարկութեանը, որը շատ կատաճաւոր է, յոյս կայ որ պարլամենտը նրան կը մերժի:

Արդէն այս մի և նոյն հարցի վերաբերութեամբ ազատամտները մի առանձին ժողով կազմեցին, և դրա դէմ բողոքեցին պարլամենտին:

Վերջին նիստում պարլամենտին առաջարկվեցաւ, որ նա դաշնակցական ժողովի խորհրդարանի մէջ Վիւրտեմբերգի համար մի լիազօր նշանակէ: Պարլամենտը այդ հարցը ներկայացրեց մի առանձին մասնագործի քննութեանը:

ՄԱՍՈՒՄԻ ԹՂԹԱՅՈՒՆՈՒՆԵՐ

Կարինէն մայիս 16 թուով հետեւեալը գրուած է մեզ:

Վայսերական Փոմիսէրներն ամայս Ծ-ին հոս հասան: Իրենց եղած ընդունելութիւնը խիստ փառաւոր էր. բոլոր Կարին ոտքի վրայ էր. 21 թնդանօթ արձակուեցաւ, քաղաքային և զինուորական բոլոր պաշտօնատարք մինչև մէկ ժամ ընդ առաջ գնացած էին, ունենց մինչև 3 ժամ, և ունենց ալ մինչև 12 ժամ, այս վերջիններն էին ոստիկանութեան հազարապետը, վարչական ժողովի անգամ Պալարեան, Համազասպ էֆէնտին, առեւտրական ժողովի անգամ Ա. Ս. Մ. աղա և չորս հեծելազօր:

Վսեմ. Փոմիսէր 3 օր Բարերդ մնացին, և ճրագրուեցին միջև հոս 12 օրէն հասան: Զանբան օր գիւղի որ հաճնէին, հոն անմիջապէս ըննութեանց կ'սկսէին, և բնակչաց վճար հասկնալով՝ անոնց ցաւերն և ցաւերուն պատճառներն ու աղբիւրները մանրամասնաբար գրի կ'առնէին:

Մայիս Գ-ին իրենց պաշտօնին ձեռնարկեցին, և առ այժմ միայն ըննութեամբ կը բաղին: Կայսերական հրովարտան ամայս 21-ին պիտի կարգացուի մեծ հանգիստ: Մէկ շաբթուան մէջ շատ մ'աղերսագրեր, պաշտօնէից դէմ բողոքներ և բարենորոգմանց նշանակումներ և այլ առաջարկութեանց ծրագրեր մատուցուեցան: Ժամատարմայի կանոնադրութեան հիմնական սկզբանց վրայ Կարնոյ համար ժամատարմա կարգելու նպատակաւ յանձնարար մը դրուեցաւ: Սոյն յանձնարարին անգամ որոշուած են Կարնոյ, Բարերդի և Նրկնակայի վարչական ժողովոյ Թուրք և Գրիստոնեայ անդամներէն մէկ քանին, զինուոր

րական կարգէն տեղակալ մը (Գայմազաւ), և տեղւոյս կուսակալը: Առաջին Փոմիսէր Վսեմ. Երեսուցի փաշան կը նախագահէ և երկրորդ Փոմիսէր Աղաբէկեան Վսեմ. Սարգիս էֆէնտին ալ ներկայ կը գտնուի:

Այս յանձնարարին պաշտօնն է գաւառին ոստիկանութեան թիւը որոշել:

Վսեմ. Փոմիսէրը ամեն առաւել ժամը Ձէն մինչև 11 կ'աշխատին. Նոյնի Վսեմութեանց համար զինուորական պաշտօնատան մէջ չորս սենեակ յատկացած է:

Տեղւոյս Առաջնորդ Գեր. Յարութիւն Սըրբազան և Գեր. Վահան վարդապետ այսօր Վսեմ. Փոմիսէրներուն այցելութիւն տուին:

Ամեն օր խումբ խումբ ազգային Նոյնի Վսեմութեանց ներկայանալով՝ երկրին պիտոյից, ցաւոց և բարենորոգմանց նկատմամբ կը տեսակցին:

Կը յուսացուի որ Վսեմ. Փոմիսէրը մինչև երեք ամիս հոս իրենց պաշտօնն աւարտեն և նախ Պաշադիւր, Մուշ և ապա Վան երթան, ուր ձմեռը պիտի մնան և դարնան Նրկնակ, Տէրսիւմ և ապա Տրապիզոն երթան, ուր տեղի բարենորոգմանց գործարարութեան պաշտօնն ալ իրենց յանձնուած է:

Աստուած տայ սր Ազգն այս անգամ իւր բաղձացեալ նպատակին հասնի:

Վսեմ. Փոմիսէրը սրտի մտք իրենց պաշտօնին ձեռնարկած լինելով իրենց հայրենաւ սիրութեան և անաչառ արդարասիրութեան շատ բան կրնանք սպասել:

Եթէ հիմնական բարենորոգումներ գործադրուէ համար կատարեալ արտօնութիւն և ըստ այնմ հրահանգ արուած է իրենց, մեր ակնկալութիւնը կրնայ 'ի դերս չենել իսկ եթէ այսպէս չէ, մեծ բաներ չեն կրնար յուսացուիլ, և իրաց վիճակը գրեթէ նոյն կը մնայ և մինչև իսկ յանցաւորներու արժանի պատիժը չը տրուի:

Առ այժմ չենք կրնար կարծիք մը յայտնել, սպասենք գործարարութեան և այն առնել պէտք եղածը կը հարգուինք ձեզ:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՍԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 21 յունիսի: «ՊՈՒՆԵ» լրագրին հեռագրում են 4. Պոլսից, յունիսի 10-ից հետեւեալը: Հայաստանի մէջ անկարգութիւնները, որոնց մասին հարցաւորում էին տեղական եպիսկոպոսները, սկսում են իրանց վրա Բ. Գրան ծանր ուշադրութիւնը դարձնել: Ներսէս պատրիարքը դեռ չէ յետ տեղի իր հրաժարականի մասին խնդրել: Բ. Գրան օր մինչև այժմ չէ կամեում նրա հրաժարականը ընդունել: Իսկ Հայոց ազգային ժողովը հրաժարվում է Ներսէսի մի յաջորդ ընտրելու, որպէս զի վերջ գին գործերի այդ տեսակի դրութեանը և խուսափի օտարերկրեայ գեպպանների միջամտութենից: Հայաստանում վերանորոգութիւններ մտնելու խնդրի մէջ: Սեւ. վիզիրը հրակրեց իր մօտ անցեալ շաբաթ օրը գլխաւոր անուանի հայ յերից մինին, Թարութիւն Գարեանին, որ Մահմուդ-փաշայի մեծ վիզիրութեան ժամանակ մուստեշարի պաշտօն էր վարում: Տեսակցութեան ժամանակ Դէյրէզին-փաշա մեծ վիզիրը առաջարկեց Գարեանին ընդունել հայոց համայնքի վեքիլի պաշտօնը և այդ պաշտօնի անունով յանձն առնել թիւրքաց տէրութեան հետ ունեցած հայոց համայնքի քաղաքական բոլոր յարաբերութիւնների վարելը: Կիրակի օրը 4. Պոլսի հայոց եկեղեցիներում հանդիսաւոր կերպով յայտնված այդ կարգադրութիւնը մեծ յուզմունք պատճառեց 4. Պոլսի հայոց ազգայնականութեան մէջ:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 21 յունիսի: Պետական բանկի 50% տոմսերը առաջին շրջանի արժէ 95 ր. 37 փ., երկրորդ 95 ր., երրորդ 95 ր. 12 փ., չորրորդ 95 ր. 12 փ., առաջին ներքին 50% փողատութեան տոմսերը արժէ 241 ր. 25 փ., երկրորդ 235 ր. 25 փ., առաջին արեւելեան փողատութեան 92 ր. 37 փ., երկրորդ 92 ր. 37 փ., երրորդ 91 ր. 87 փ., Ոսկի 8 ր. 39 փ.: Տրամադրութիւնը հանդարտ է:

Խմբագիր-Հրատարակող ԳԻՒԳՈՒ ԱՐՄԻՆԻ

3 У 3 S У Р А Р О Т Т Т Т Т Т Т Т

„УЧУ“

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 թ-ին

ԿԸ ՀՐԵՏԵՐԵԿՎԻՒՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոներին հետևեալ օրերին:

1. Երգերի գիրքը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԵՐԻՆԵՐ: «ՄՇԼԿԻ» տարեկան գիրք 10 ռուբլ է, կես տարեկան 6 ռուբլ: Գրքի կարելի է ՄԻՆՅՆ ԽՄԱՐԵՐԵՐԸ մեջ:

ԵՌԵՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատար. Օտար քաղաքներից պետք է գիմել հետևեալ հասցեով ТИФ-ЛИСЬ Редакция «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ներկաներն հրապարակի վրա թԱՄԱՄԵՆԻ կարավանային դեմոկրատիայի № 11. տան վերին խորհուրդ վարձով տրվում է մեկ ԴԱՆԻՔ Ծառայող, լա. կարավանով և առաւօտ-երեկ սամովարով. դաշինք մի բաղկուն ունի իր առաջ: Գիրքն է ամսական 40 ռուբլ: Բացի դաշինք մի և նոյն տանը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍԵՆՍԱԿՆԵՐ կարավանով, ծառայող, սամովարով և լուսաւորութեամբ. այդ սենսակները ամսական արժէն 25, 20 և 15 ռուբլ: Այդ սենսակներում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի և նոյն տան գրան առաջ միջոց ծախող ՅԱԿՈՎԻՆ:

Մի դաշինք, կահարասիքով, ծառաներով և սամովարով վարձով է տրվում: Դաշինքը ունի բաղկուն փողոցի վրա: Կայ և փողը սենսակ, նոյնպէս բաղկունով փողոցի վրա, և մի դաշինք պատուհաններով դէպի փողոց: Գտնվում է Երեւանեան հրապարակի վրա, Թամամշեկի քարվանսարայի դիմաց, Դուրբնովի տուն, № 11: Գնի մասին հարցնել նոյն տեղ պ. Վարդանանցին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆԸ լուր է հասնում, որ Թիֆլիսում գտնված դատարկ հողերի ՏԵՐԵՐԸ, ինչպէս իշխ. Թումանով, Երեստով, Կաթայիցներ, Մեկելով և այլ մանրացնում են իրանց հողերը և ՄԱՍՈՒՄ ՆՆ առանց պլան կազմելու և նրան քաղաքային վարչութեանը ներկայացնելու ՀԱՄԱՌԱԿ քաղաքային բարեկարգութեան ժամանակաւոր ԿԱՆՈՆԵՐԻ 16 յօդուածի և շինութիւնների կանոնադրութեան 307 յօդուածի: Այդպիսի հողերի տէրերը հրաւիրում են ծախելուց առաջ ներկայացնել քաղաքային վարչութեանը հողերը մանրացնելու նախագիծերը, իսկ գնողներին յայտնվում է, որ քաղաքային վարչութիւնը ԹՊԼ չի տալ որ և է շինութիւն անել այն հողերի վրա, որոնց տէրերը չեն կատարել փրոյեկտայ պահանջը: Վերոյիշեալ նախագիծերը կազմելու համար, քաղաքային վարչութիւնը ամեն կերպ կօգնի:

1—3

ԵՐԵՐԵՐԻՐԻ ԴԱՍԱՍՆԸ մի գիմնադրատ գիմնադրական ԿՈՒՐՍԻ համեմատ ԴԵՍԵՐ է փնտռում ԿԵՐԱԿՈՒՐԻ ԵՒ ԲՆԱԿԱՐԱՆԻ համար, կամ չափաւոր ՎԱՐՁԱՍՏՈՒԹԵԱՄԸ: Կարող է նոյնպէս ՀԱՅՈՑ լեզուի դասեր տալ: Հարցնել կարելի է Թոյնի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԵՐԾՐՈՒՆՈՒ ԳԵԼԵՐԵՅՈՒՄ:

1—5

ՊԱՏԻՒ ՈՒՆԵՄ ՅԱՅՏՆԵԼ ԹԻՖԼԻՍԻ Պ. Պ. ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ, որ ես բերել եմ ՓԱՐԻՋԻՑ ամեն ՏԵՍԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ, որոնց համար ՊԱՏՈՒԵՐՆԵՐ եմ ընդունում ձեռնառու ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ: Այդ օրինակները ԿԱՐԵԼԻ է տեսնել ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱՅԵՐԵՅԻՄ 181, որտեղ նոյն ՄԱՍՆԱԿԱՐՁ ժամանակամիջոցում ԴԱՍԱՒՈՐՎԱԾ կը լինեն: ՓԱՐԻՋԻ տուն. GILLES ET SOHN CHARDON.

Ներկայացուցիչ Զ. ԵՁՈՎ.

ՅՈՒՆԻՍԻ 6-ից 1879 թ-ի

Նոր բացված է ԳԱՅԻՆԵՍՅԻ մահաղին: Մեծ ընտրութիւն ուսաց և հօլլանդական կտաւի և սեղանի ճերմակեղէնի: Կան նաև զանազան կահ կարասիներ, մօղային, մանուշակաւորական և այլ ապրանքներ:

Մազաղներ գտնվում է ԵՐԵՎԱՆԵՍԻ հրապարակի վրա Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութեան բնակարանի տակ, Խաղաղովի տանը: 1—10

Ա Մ Ա Ր Ա Յ Ի Ն
ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔՆԵՐ

Ամարային արձակուրդների ժամանակ պարպել ցանկացողներուն ընդունում և պատրաստում են Թէ որ և է դպրոց մանկու և Թէ վերաբնութեան համար:

Պարապմունքը կը սկսուի յունիսի 11-ին և կը վերջանայ օգոստոսի 20-ին:

Պարապել ցանկացողները կարող են դիմել «Տարրական դպրոց» վերամիջոցի փողոցը պ. Իշխան Ամատունու տանը № 11.

На Дворцовой улицѣ въ Галерѣе Арцруни въ магазинѣ Шахъ-Азизова № 169 и 170.

Принимаются заказы переплеть книгъ и журналовъ по умереннымъ цѣнамъ.

2—1

ՄԻՐԵՅՈՒԼԵՆ ԿԵՐՈՒՐ. ԳԼԻՄ. Օլոբալովի տան մեջ գտնված Ն. Ա. ԴՈՍՏԱՐԱՅԿՈՒ «ՊԱՐՏԱՄՈՒՐՅԱԿՆԵՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գրաւով և պարտամուրհակով ՓՈՂ է տալիս, գրնում է առևտրական ՊԱՐՏԱԹՂԹԵՐ, ծախում է ներքին փոխառութեան ՏՈՍՍԱԿՆԵՐ վճարը մաս մաս ստանալով, կատարում է զանազան ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մի և նոյն տեղը գտնվում է «ԽՈՐՀՐԴԱՅԵԼՈՒ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ» որտեղ կարելի է տեղեկութիւններ ստանալ «ԲԵՂԵՐԵՅԻՆ ԲՈՒՆԿԱՆ ԵՒ ԵՌԵՆՁԻՆ ԳՈՐԾԵՐԻ մասին: Գրասենեակը ընդունում է քաղաքային գործերի կատարումն իր ծախսերով, բրեկան գործերի պաշտպանութիւն և ամեն տեսակ ԳՐԱՄՈՐ ԵՐԵՎԱՆԵՐՆԵՐԻ ԿԵՐՈՒՄՆԵՐ: Ի նկատի ունենով «ԳՐԱՄՆԵՆԿԱՆԵՐԻ» ունեցած չափազանց ՇԼՏ աշխատանքները ցանկացողները հրաւիրվում են ԲՆԿԵՐԵՆԱԼ: Ցանկացողները պետք է յայտնեն մինչև յուլիսի 1-ը:

2—5

Ներկայ 1879 թ-ի յուլիսի սկզբից, տէրութեան Թոյլտուութեամբ, Թիֆլիսի մեջ հրատարակվում է ուսու «КАВКАЗЪ» լրագրի չափով, քաղաք—գրականական շաբաթաթերթ «ՂԵՆԱՍԻՆ» ուսու և հայ լեզուներով հետևեալ պրոգրամմով:

- 1) Գաղափարական ժամանակագրութիւն.
 - 2) Տեղական կենսի ուսումնասիրութիւն. Թէ տնտեսական, Թէ վիճակագրական ու Թէ գիւղատնտեսական կողմերից:
 - 3) Գրականութիւն. գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ. լինեն նրանք Թարգմանութիւններ Թէ ինքնուրոյնութիւններ: Քննադատութիւն ուսու, հայ և օտարագրի գրականութիւնների:
 - 4) Քաղաքականութիւն. քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:
 - 5) Մանր լուրեր:
 - 6) Մասնաւոր յայտարարութիւններ:
- «ՂԵՆԱՍԻՆ» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը, Թիֆլիսում, առանց տուժ հասցնելու 5 ռուբլ:
- Տուժ հասցնելով 5 ռ. 50 Կ.
- Ռուսիոյ զանազան քաղաքներ ղրկելով 6 ռուբլ:
- Փոստային զանազանութեամբ ղրկելով արտասահման 7 ռուբլ:
- Ստորագրութիւն ընդունվում է Թիֆլիս Կենտրոնական գրադառնառնոցում:
- «ՂԵՆԱՍԻՆ» համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պահանջները, օտարաքաղաքացիք պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս գալը ուղարկել ուղղակի «ՂԵՆԱՍԻՆ» լրագրի խմբագրին այս հասցեով. Григорію Тер-Меликсетову, редактору газеты „Трудъ“, въ Сололакахъ, на Сололакской ул. у Вознесенской церкви возлѣ стараго моста въ Д. Михаила Гадустова подъ № 110.
- Նիւթեր և անվաղ յօդուածներ «ՂԵՆԱՍԻՆ» խմբագրութիւնը ընդունում է միմիայն և յատկապէս ուսու, հայ, ֆրանսիական և վրացական լեզուներով:
- Խմբագիր—Հրատարակող Գրիգոր ՏԵՐ-ՄԵԼԻՔԵԼԵԱՆ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

- Ծախվում են հետևեալ նոր հրատարակութիւնները. Բ. Կ.
1. Աւերարիուս ՔԱՒԱՄԱՍ ԳԵՂՈՒՅ Թարգ. Օրիորդ ՏԵՐ-ՄԱՐԿՈՅԵԱՆ, Գիրն. — 40 Այս գիրքը, որի ընդգիրք արժանացել է ՅՅԵՐԵՅԻԱՆ ընկերութեան առաջին պարգևին, մեր մանկական գրականութեան զարդը կարող է համարուել: Թարգմանչուհու լեզուն պարզ է և դիրքորոշելի, բովանդակութիւնը չափազանց գրաւիչ: Գիրքը զարդարած է երեք հատ շքեղ պատկերներով և գեղեցիկ կաղնած. իսկ գիրք անչափ աժան:
 2. Դոկտոր Բարսեղեան՝ Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, տպագրված ընտիր Թղթի վերայ 1 —
 3. Դոկտոր Տիգրանեան՝ Մարմնակազմական կամ անատոմիական բառարան լատիներէնից և ռուսերէնից հայերէն 1 —
 4. Սեդրակ Մանդլինեան՝ Կրօնք, Հոգեբան. հետազոտութիւն 1 —
 5. Սենսերիմ Արծրունի, Սամուէլ Սուքասեանի կտակի ինդիք (հրապարակ. դասախօսութիւն) 50
 6. Գեորգ Ռոյստոմ՝ վեպ պատանիների համար Թարգ. Առաքելյանի 60
- Նոյն տեղը վաճառվում են նաև ամենատեսակ հայերէն և ռուսերէն ընթերցանելի գրքեր, դասադրերը, ուսումնական պիտոյքներ, մանկագիտական գրուածքներ և այլն:

ПОТИ-ТИФЛИССКАЯ ЖЕЛѢЗНАЯ ДОРОГА ОБЪЯВЛЕНИЕ

Съ 9 Апрелья будутъ въ движеніе товаропассажирскіе поѣзда: № 5 отъ Поти до Тифлиса и № 6 отъ Тифлиса до Поти по нижеслѣдующему росписанію.

Поѣздъ № 5				Поѣздъ № 6			
Станціи.	Приходъ.		Отходъ.	Станціи.	Приходъ.		Отходъ.
	Ч.	М.			Ч.	М.	
Поти	—	—	6 ве чера 45	Тифлисъ	—	—	попол 12 56
Ріонъ	1	25	2 20	Гори	4	15	4 35
Квирилі	3	46	4 39	Михайлово	6	25	6 45
Михайлово	9	36	10 06	Квирилі	11	44	12 15
Гори	11.	55	12 20	Ріонъ	1	24	1 54
Тифлисъ	3	51	—	Поти	6	35	—

Пассажирскіе поѣзда: № 1 изъ Поти и № 2 изъ Тифлиса, а также товаропассажирскіе поѣзда № 7 изъ Сурама № 8 изъ Тифлиса будутъ въ движеніи по прежнимъ росписаніямъ.